«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ ԻՄ «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հիշում եմ, ինչ առանձնակի ոգեւորությամբ էին մեր տանն ընթերցվում Ախալքալաքիի շրջանի, ախալքալաքցիների մասին հոդվածները: Գրեթե բոլոր նրանց, ում մասին հիշատակում էր «Վրաստանը», իմ ծնողները ճանաչում էին: Վրաց-հայկական մեր ընտանիքում վրացերենն ու հայերենը սիրված լեզուներ էին, հաճախ ինքներս էլ չգիտակցելով վրացերենով սկսած նախադասությունն ավարտում էինք հայերեն բառերով: Եվ շրջապատից բացի, հայերենի ուսուցման համար անձամբ ես շատ բանով պարտական եմ «Վրաստանին»:

Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ «Վրաստանը» նշանակալի դեր է կատարել եւ կատարում է Վրաստանի ազգությամբ հայ քաղաքացիներին երկրի կյանքում ինտեգրման, լեզվական արգելքի հաղթահարման, նրանց Վրաստանի լիարժեք քաղաքացու զգացումը ամրապնդելու ուղղությամբ:

Շնորհավոր հոբելյանդ, հիշողությունների աղբյուր «Վրաստան», երկարակեցություն քեզ ու բարգավաճում: Իսկ խմբագրական կոլեկտիվին մաղթում եմ երջանկություն, ստեղծագործական հաջողություններ, առաջընթաց:

ՎԼԱԴԻՄԻՐ ԱԼԵԼԻՇՎԻԼԻ

ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՄՅԱԿԴ, ՀԱՅՈՑ ՄՏՔԻ ՓԱՐՈՍ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Սուրբ մասունքի նման դպրոցի պատմության թանգարանում պահվում են վերոհիշյալ թերթերի ու ամսագրերի կտրոններ, ինչպես նաեւ նմուշներ:

Անցնում են տարիներ, փոխվում օրենքներ, հաղորդակցման միջոցներ, նույնիսկ՝ համակարգչային գործընթացը չի խանգարում սիրելի թերթերի կարեւորության մասին. հաջորդ համարների անհամբեր սպասելուն, սիրով ընթերցելուն:

Լրագիրն ամենազորեղ դպրոցն է ընթերցողների համար՝ բազմաթեմա եւ բազմաբնույթ...

Ջավախահայերիս շնորհակալական խոսքը «Վրաստան» պարբերականի մեկդարյա գործունեության մասին է. արարում ազգ-հայրենիքի...

Թերթի 100-ամյակի առիթով բարեմաղթում եմ քաջառողջություն, նորանոր հաջողություններ գլխավոր խմբագիր, հարգարժան Վան Բայբուրթյանին, տեղակալ Յուրի Պողոսյանին, Գայանե Բոստանջյանին, Տիգրան Սիրադեղյանին եւ բոլոր-բոլոր նրանց, ովքեր իրենց հոդվածներով նոր շունչ են հաղորդում սիրելի «Վրաստան»-ին:

ՉԻՆԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ՎՀ վաստակավոր ուսուցչուհի
Ախալքալաքիի մունիցիպալիտետ
գ.Կարտիկամ

ԱՎԱՆԴԱԿԱՆ

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ «ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ»

Հայերը միակն են աշխարհում, որ 1000 տարուց ավելի նշում են «Թարգմանիչների օրը», որը սահմանվել է՝ ի պատիվ «Աստվածաշունչը» թարգմանած վարդապետներ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի, պատմիչներ Եղիշեի, Մովսես Քերթողի, Ներսես Շնորհալու, փիլիսոփաներ Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու հիշատակի:

Սրբերի շարքը դասված այդ գործիչների շնորհիվ՝ մեր ժողովուրդը կարողացել է ժառանգություն ստանալ հայ առաջին թարգմանական գրականությունը՝ «Աստվածաշունչը» (թարգմանվել է հունարենից եւ ասորերենից), որը ֆրանսիացի գիտնական Լա Կրոզը (1661-1719) անվանել է՝ «Թագուհի թարգմանչաց»: Հայ գրերի գյուտից անմիջապես հետո ծավալված թարգմանչական շարժումը նպաստել է՝ մեզանում եվրոպական քրիստոնեական մտքի նվաճումների յուրացմանը եւ՝ լուսավորականության, կրթության, գիտության, լեզվաշինության եւ նոր գաղափարների զարգացմանը:

Թբիլիսիում «Թարգմանչաց տոնը» վերականգնեց լուսահոգի, երջանկահիշատակ մեր գործընկերը, բանաստեղծ ու թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը:

Իսկ այս տարի Թբիլիսիում «Թարգմանչաց տոնը» մեկնարկեց Հավլաբարում գտնվող «Սուրբ էջմիածին» եկեղեցում:

«Սուրբ էջմիածնում» օրվա խորհուրդը նշանավորվեց թարգմանիչների հիշատակին նվիրված Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանի եւ փոխառաջնորդ Նշան վարդապետ Հմայակյանի հանդիսապետությամբ՝ պատարագի եւ հոգեհանգստյան կարգի արարողություններով: Նրանք ավարտվեցին Վիրահայոց թեմի կրթամշակութային եւ երիտասարդության կենտրոն «Հայարտան» նախակրթարանի եւ շաբաթօրյա ու կիրակնօրյա «Սուրբ Եղիա մարգարեի անվան» դպրոցի սաների գեղարվեստական ելույթներով:

«Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում երեկոն բացվեց Հայր Կիրակոս Դավթյանի խոսքով, որում արժեւորվեց հայ մշակույթում «Թարգմանչաց տոնի» ավանդույթների կարեւորությունը: Թարգմանական գրականության՝ մեր մշակույթ բերած արժեքների մասին էին «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանի, Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական Աննա Սահակյանի, մանրանկարիչ Մերուժան Շահումյանի, բանաստեղծներ Մարինա Կիրակոսյան-Մոսեսովայի, Աղասի Գեւորգյանի, Միխայիլ Անանովի, «Հայարտան» ղեկավար Եվգենյա Մարկոսյանի, կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի Ռոզա Զոհրաբյանի ելույթները: Ճանաչված բանաստեղծ, թարգմանիչ, հայ դասական գրականության նմուշների վրացերեն թարգմանության հեղինակ Գիվի Շահնազարը իր ողջույնը ներկաներին հղեց հեռավար:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանում Հայաստանի դեսպանատան կցորդ Ավետիք Հարությունյանը, վրաց բանաստեղծ եւ թարգմանիչ Լեւան Ցալուղելաշվիլին, Վրաստանի կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, գրող Վալերի Հունանյանցը, երեւաբնակ գրող, թարգմանիչ Անուշ Սարգսյանը:

Դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Եսայի Աբովյանը, Իլիայի անվան պետական համալսարանի ուսանող, «Հայարտան» կրթամշակութային կենտրոնի մենակատար Աիդա Բազոյանը, Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասան Հենրիխ Պետրոսյանը, Թբիլիսիի թիվ 104 դպրոցի աշակերտ Աննա Անանովան երեկոն զարդարեցին գեղարվեստական կատարումներով:

Միջոցառումը վարեց կենտրոնի աշխատակից Գոհար Մազմանյանը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽ

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կառուցվող նոր շենքը շահագործման կհանձնվի 2022 թ.: Այս մասին Սպուտնիկ Արմենիայի թղթակցի հետ զրույցում ասաց թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը:

Թատրոնը կառուցված է միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան եւ հավակնում է լավագույնը դառնալ ոչ միայն երկրում, այլեւ տարածաշրջանում: Այս մասին Սպուտնիկ Արմենիայի թղթակցի հետ զրույցում ասաց Թբիլիսիի հայկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը:

Թբիլիսիի հայկական թատրոնի հին շենքը քանդել էին 2018 թ.: Ի սկզբանե նախատեսում էին վերանորոգել ու վերականգնել այն, սակայն շենքն այնքան էր խարխլվել, որ նախագծի հեղինակները որոշեցին քանդել այն եւ նույն տեղում՝ Վրաստանի մայրաքաղաքի կենտրոնում, նոր թատրոն կառուցել: Ընդորում, հին շենքի ճարտարապետական ոճը լրիվությամբ պահպանել են:

Արմեն Բայանդուրյանը նշեց, որ թատրոնի շինարարությունն ու վերանորոգման աշխատանքները ձգձգվել են համավարակի պատճառով:

- Այժմ շինարարությունն ավարտական փուլում է: Շահագործման կհանձնվի 3-4 ամսից: Ներկայում լույսի եւ ձայնային սարքավորումների մոնտաժային աշխատանքներն են իրականացվում,- ասաց նա:

Գեղարվեստական ղեկավարի խոսքով, նոր շենքը հարմար է, տեխնիկապես ավելի հագեցած եւ հարուստ: Այնտեղ կլինի երկու դահլիճ. մեծը՝ 450 եւ փոքրը՝ 120 տեղանոց, մի քանի փորձասրահ, մարզադահլիճ, բուֆետ, ինչպես նաեւ սենյակ, որը պետք է թատրոնի թանգարանը դառնա: Թատերախումբը սպասում է, թե երբ հնարավոր կլինի վերջնականապես հիմնավորվել այնտեղ:

Արմեն Բայանդուրյանը նշեց, որ հստակ հայտնի չէ, թե ընդհանուր որքան գումար է ծախսվել շենքի կառուցման համար, բայց գիտի, որ նոր թատրոնը մոտ 18 մլն դոլար է արժեցել: Ֆինանսավորումն ամբողջությամբ իր վրա է վերցրել Վրաստանի նախկին վարչապետ, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» իշխող կուսակցության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլին՝ միջոցներ հատկացնելով իր «Քարթու» հիմնադրամից:

- Բիձինա Իվանիշվիլին ամեն ինչ արել է, որպեսզի թատրոնը լավագույններից մեկը դառնա ոչ միայն Վրաստանում, այլեւ տարածաշրջանում,- նշեց Բայանդուրյանը:

ԼԱՈՒՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՓԱՌԱՏՈՆ

«ՇՐՋԱՆՑԻԿ ՆՐԲԱՆՑՔԸ» ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ԴԻՊԼՈՄՈՎ ԵՎ ՊԱՐԳԵՎՈՎ

Հայաստանում անցկացվեց ավանդական եւ «Թատերական Լոռի» միջազգային 29-րդ փառատոնը:

Այն այս տարի նվիրված էր Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի 90-ամյակին: Փառատոնին մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի եւ Եգիպտոսի թատերական կոլեկտիվները:

Ներկայացումները ցուցադրվեցին սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 10-ը, Հայաստանի Լոռիի մարզի հինգ քաղաքներում՝ Վանաձորում, Ալավերդիում, Տաշիրում, Ստեփանավանում եւ Սպիտակում: Փառատոնին Վրաստանը ներկայացրեց թբիլիսյան «Շրջանցիկ նրբանցք» ժողովրդական թատրոն-ստուդիան: Արտեմ Գրիգորենցի «Անհրաժեշտ է նոր ձեւեր» ներկայացումը ցուցադրվեց Սպիտակում եւ Տաշիրում: Թբիլիսիի դերասանների ստեղծագործության գնահատականը շնորհակալ հանդիսատեսի բուռն ծափահարություններն էին:

Շնորհավորում ենք մեր սիրողական թատրոնին՝ այդ հաջողության կապակցությամբ: Յուրահատուկ ժողովրդական թատրոնի «գանձարկղը» համալրվեց նոր դիպլոմով ու մրցանակով:

«Շրջանցիկ նրբանցք» թատերական ստուդիային մաղթում ենք նորանոր հաջողություններ եւ առաջընթաց:

ՆԻՆԱ ՇԱԴՈՒՐԻ-ԶԱԼԴԱԼԻՇՎԻԼԻ
Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան ակադեմիական պետական թատրոնի գրական բաժնի վարիչ

COVID - 19

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ ՆՎԱԶՈՒՄ ԵՆ, ԱՃՈՒՄ Է ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՕՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Առաջին փուլում Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը եւ Առողջապահության նախարարությունը անհրաժեշտ էին համարել պատվաստումային նպատակին հասնելու համար՝ պատվաստել չափահաս բնակչության առնվազն 60 տոկոսին: Ըստ կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեի, սակայն, կորոնավիրուսի ավելի բարդ ու վարակիչ «դելտա» տարբերակի լայն տարածման պատճառով, 60 տոկոսի փոխարեն, պետք է պատվաստվի բնակչության 80 տոկոսը:

Գամղրելիձեի խոսքով, փաստ է, որ վերջին 5-6 օրերի ընթացքում կորոնավիրուսով վարակվածների թիվը կտրուկ ավելանում է:

- Առանց պատվաստումների, այս համավարակը չի ավարտվի: Մենք նորից կունենանք աղետալի հետեւանքներ, որոնք առաջին հերթին կազդեն մարդու առողջության վրա, կունենանք մարդկային կորուստներ, եւ երկիրը ստիպված կլինի խիստ սահմանափակող միջոցներ ձեռնարկել,- հայտարարել է Գամղրելիձեն:

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի խոսքով, երկրում պատվաստումների մակարդակը բարձրացնելու մի քանի տարբերակ կա: Նրա խոսքով, հենց այդ նպատակով է սկսվել «մարաթոն», որի շրջանակներում այս փուլում ընտրվել է 49 գյուղ:

Վրաստանում պատվաստումն իրականացվում է կամավոր սկզբունքով, անվճար:

Այս պահին Վրաստանում հասանելի են «Pfizer», «Sinopharm», «Sinovac» եւ «Astrazeneca» պատվաստանյութերը:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍՊԱՍՎՈՒՄ Է Է'Լ ԱՎԵԼԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ «ՏՎԻՆԴԵՄԻԱ»

Մասնագետների հավաստմամբ, Վրաստանում կարող է սկսվել է'լ ավելի վտանգավոր «Տվինդեմիա», իրավիճակ, երբ կորոնավիրուսի հերթական ալիքը կարող է համընկնել սովորական հարբուխային հիվանդությունների, մասնավորապես գրիպի հետ:

- Ցրտերի հետ միասին, ի հայտ եկան շնչառական այլ վիրուսներ: Հոկտեմբերի վերջին կտրածվի գրիպ եւ սպասվում է «Տվինդեմիա» կորոնավիրուսի եւ գրիպի վիրուսի համընկման կապակցությամբ,- հայտարարեց Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեն:

Նրա խոսքով, վերջին օրերին Վրաստանում կորոնավիրուսով վարակման դեպքերն ավելացել են: Նրա կարծիքով, դրա պատճառներից մեկը պատվաստման նվազ տեմպերն են: Ըստ Պաատա Իմնաձեի, վարակման գործընթացը կարող է կանգնեցնել միայն զանգվածային պատվաստումը:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 240 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 240 470 110-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 4 899 069-ը: Ապաքինվել է 217 759 359 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **45 639 012** դեպք: Այստեղ մահացածների թիվը **741 893** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **34 037 592**-ի, մահացածներինը՝ **451 847**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **21 612 237**, մահացել՝ **602 201** մարդ: **Մեծ Բրիտանիայում** կորոնավիրուսով վարակվել է **8 317 439**, վարակի հետեւանքով մահացել՝ **138 237** մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Արգենտինան ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **278 431**-ի, մահացածներինը՝ **5 713**-ի, ապաքինվածներինը՝ **252 211**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը **496 780** է: Վարակից մահացել է **6 720,** ապաքինվել՝ **476 229** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **652 677,** մահացել՝ **9 396**, ապաքինվել՝ **608 861** մարդ:

*Հոկտեմբերի 15-ին կորոնավիրուսով վարակման **3 270** նոր դեպքերից **920-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 178, Իմերեթիում՝ 700, Քվեմո Քարթլիում՝ 191, Շիդա Քարթլիում՝ 149, Գուրիայում՝ 86, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 315, Կախեթիում՝ 586, Մցխեթա-Մթիանեթիում՝ 50, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 31, Սամցխե-Ջավախեթիում՝ 64:***

Հոկտեմբերի 8-ի դրությամբ, մահացել է 26 մարդ:

ՉՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՎ ՄԻԱՅՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՎԵԼԻ ՀԱՃԱԽ ԿՍՏՈՒԳՎԵՆ

Լրիվ պատվաստում անցած մանկավարժները, երկու շաբաթը մեկ անգամ, պետության ֆինանսավորմամբ, կանցնեն թեստավորում:

Իսկ չպատվաստված եւ մեկ անգամ պատվաստված մանկավարժները հակամարմնի արագ թեստավորումը նույնպես անվճար հանձնելու են յուրաքանչյուր յոթ օրը մեկ անգամ: Այդ մասին նշված է Վրաստանի վարչապետի ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած կարգադրության մեջ: Նշենք, որ, մինչ այդ, կառավարությունը նշում էր, որ պատվաստում չանցած մանկավարժների համար հակամարմնի թեստավորումը կլիներ պարտադիր, եւ դրա արժեքը վճարելու էր կամ դպրոցը, կամ անձամբ մանկավարժը:

Վարչապետի կարգադրությամբ, թեստավորումն անց է կացնելու դպրոցի բժիշկը կամ հատուկ դրա համար պատվաստված անձնակազմը: Լրիվ պատվաստումը ուսուցիչները՝ 14 օրը մեկ անգամ կհանձնեն թեստավորում, իսկ մյուսները, այսինքն՝ չպատվաստված կամ մեկ անգամ պատվաստված ուսուցիչները, յուրաքանչյուր 7 օրը մեկ անգամ:

Միաժամանակ, Կովիդ թեստավորումը պարտադիր չի լինի նրանց համար, ովքեր հեռավար դասավանդում են անցկացնում: Բացառություն նախատեսված է այն դեպքերի համար, երբ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության միջնորդությամբ, թեստավորումը համարվում է ոչ պարտադիր:

Ինչ վերաբերում է թեստավորման սակագնին, ապա, ինչպես պարզաբանեցին առողջապահության նախարարությունում, պատվաստման մեկ դեղաչափ կամ լրիվ պատվաստում անցած մանկավարժների ՊՇՌ թեստավորումը լրիվությամբ ֆինանսավորվում է պետության կողմից, իսկ պատվաստում չանցած մանկավարժների համար, թեստավորումը նախատեսում է միայն արագ թեստի անցկացման եւ ոչ թե՝ ՊՇՌ-ի անցկացման ժամանակ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՄԵԿ ՏԱՐԻ՝ ԱՌԱՆՑ ՄԵՐ ՄԻՇԱՅԻ, ՔԱՅԼՈՂ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ



Մեր գյուղի՝ Փոքր Խանչալիի արժանի զավակներից անշուշտ պետք է առանձնացնել էությամբ իրապես մտավորականին՝ Միքայել (Միշա) Եսոյանին:

Ո՞վ էր Միքայել Եսոյանը գյուղի համար՝ ուսուցիչ, լրագրող, գրող ու հասարակական գործիչ, մարդասեր, լավ ընկեր... Այս ցուցակն անվերջ կարելի է շարունակել, բայց մենք՝ գյուղը, նրա ընտանիքն ու հարազատներս, կյանքը շարունակում ենք մեծ կորստի ցավը կրելով մեր սրտերում ու այն հույսով, որ մի օր հանդիպելու ենք...

Միքայելը ծնվել է 1952 թվականի սեպտեմբերի 30-ին, Նինոծմինդայի շրջանի Փոքր Խանչալի գյուղում: Գյուղի դպրոցում 7 տարի սովորելուց հետո, ուսումը շարունակել է Նինոծմինդայի թիվ 1 դպրոցում: 1970 թվականին ընդունվել է Երեւանի պետական համալսարանի մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետի մեխանիկայի բաժինը, ապա՝ սովորել նույն համալսարանի նորաբաց մաթեմատիկայի ֆակուլտետում, հետո՝ Պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինության ֆակուլտետի ճանապարհային մեքենաներ ու սարքավորումներ բաժնում, սակայն ուսումնատենչ հայորդին հանգամանքների բերումով թվարկված բոլոր համալսարաններում ուսումը կիսատ է թողել:

Միքայել Եսոյանը ԽՍՀՄ ժուռնալիստների միության, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ էր: Ստեղծագործել է դպրոցական տարիքից, տպագրվում էր Վրաստանի ու Հայաստանի պարբերական մամուլում: Արձակագիր էր, 2000-ից ավելի հանելուկի, 2 պոեմի, բազմաթիվ ակնարկների, հումորապատումների հեղինակ էր: Նրա հերոսները իր շրջապատի մարդիկ էին: Բանահավաք ու ազգագրագետ էր, «Ջավախքի բառ ու բանը» շարքի, Փոքր Խանչալի գյուղի տարեգրության հեղինակ: Հավաքում էր գյուղի բառ ու բանը, բարբառային նմուշները, մեծ բծախնդրությամբ գրանցում տետրերում, որոնց թիվը հասել էր 50-ի: Նախատեսում էր այս ամենը՝ ի մի բերել մի գրքում, այն վերնագրելով «Ջավախք աշխարհի բանարվեստի գանձերը»: Միքայել Եսոյանի ձեռագիր աշխատանքներից շատերը լույս չտեսան իր կենդանության օրոք:

23 տարի աշխատել է շրջանային «Արշալույս» թերթում, սկզբում՝ թղթակից, հետո՝ թարգմանիչ, այնուհետեւ մինչեւ աշխատանքից դուրս գալը՝ նամակների բաժնի վարիչ:

Հեղհեղուկ օրերի թելադրանքով 2000 թվականին վերադառնում է հայրենի գյուղ եւ դպրոցում սկսում ուսուցչի գործունեություն: Միքայելը սիրում էր իր աշխատանքը, սաներին, նրանց հետ կապված էր հազար ու մի թելով, նրանց հետ վերաբերվում՝ հավասարը հավասարի պես: Գյուղում չկա մեկը, ում ընկեր Միշան օգնած չլինի: Քայլող հանրագիտարան էր, նրա ինտելեկտը թափանցում էր գիտության ու մշակույթի բոլոր ոլորտները: Շատ էր սիրում թատրոնը: Խաղացել է շրջանի թատերական խմբի հետ: Դպրոցում աշխատելու տարիներին հիմնել է թատերական խմբակ, աշակերտների հետ բեմադրել ու խաղացել տասնյակ պիեսներ: Սիրում էր շախմատ խաղալ ու իր սերը ներարկել նաեւ աշակերտների մեջ, դպրոցում նրա նախաձեռնությամբ հիմնվել էր շախմատի խմբակ:

Թղթե թռչուններ էր պատրաստում, որոնց թիվն անցել էր 2000: Պետք է նշեմ, որ թռչուններից եւ ոչ մեկը նման չէր մյուսին...

Պարգեւատրվել է մի շարք պատվոգրերով, այդ թվում՝ Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի կողմից Վրաստանի հայ գրական-հասարակական կյանքում ունեցած վաստակի համար, Նինոծմինդայի քաղաքապետարանի կողմից թատերական արվեստի բնագավառում ներդրած ավանդի եւ ժողովրդական թատրոնի հիմնադրման 90-ամյակի կապակցությամբ:

Միքայել Եսոյանը 7 զավակների հայր էր, ունի 21 թոռ ու 5 ծոռ: Ասում էր, մանավանդ մեզ՝ հայ ու վրաց ազգերին բազմազավակությունը շատ է պետք, Աստված իր ստեղծածին պահում է, ամեն երեխա իր ղսմաթով է մեծանում, մեկը մյուսին չի խանգարում: Նրա շառավիղները շարունակում են իրենց հոր, պապի կիսատ թողած ուղին՝ նրա շիրմի վրա տված երդման համաձայն:

Թվում է, թե երեկ էր, աշխատանքային սեղանիդ կողքին նստած աշխարհի անցուդարձն էինք քննարկում, իմ սիրելի Միշա հորեղբայր, իսկ այսօր կրկին անգամ աթոռդ դատարկ էր...

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Նինոծմինդայի մունիցիպալիտետ
գյուղ Փոքր Խանչալի

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԻ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՔՆՆԱՐԿՎԵՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հոկտեմբերի 12-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, աշխատանքային այցով, գտնվում էր Մոսկվայում, որտեղ հանդիպում ունեցավ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

- Սա մեր չորրորդ հանդիպումն է այս տարի: Նման հաճախակի հանդիպումները վկայում են մեր շփումների բարձր դինամիկայի եւ մեր ռազմավարական, դաշնակցային հարաբերությունների կարեւորության մասին: Իհարկե, այժմ դինամիկ գործընթացներ են տեղի ունենում տարածաշրջանում եւ կարեւոր է, որ դաշնակիցները հանդիպեն եւ քննարկեն հարցեր: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը լուծված չէ: Հասկանալի է, որ Ռուսաստանը վճռորոշ դեր է խաղում հակամարտության կարգավորման եւ մեր տարածաշրջանում անվտանգության ապահովման գործում,- հանդիպման մեկնարկին ասաց Նիկոլ Փաշինյանը:

Իր հերթին, ՌԴ նախագահը նշեց, որ մշտական հեռախոսային կապի մեջ է Փաշինյանի հետ, սակայն անհրաժեշտ արդյունքի հասնելու տեսանկյունից անձնական հանդիպումները միշտ էլ արդյունավետ են անցնում: Պուտինը հույս հայտնեց, որ այս անգամ եւս այդպես կլինի:

ՀՀ վարչապետի ու ՌԴ նախագահի հանդիպմանը կողմերը քննարկեցին 2020 թվականի նոյեմբերի 9-ի եւ 2021 թվականի հունվարի 11-ի եռակողմ հայտարարությունների կատարման ընթացքին, տարածաշրջանում կայունության ամրապնդման, տնտեսական կապերի վերականգնման հետագա քայլերին ու տեղի ունեցող զարգացումներին վերաբերող հարցեր:

Նիկոլ Փաշինյանն ու Վլադիմիր Պուտինն անդրադարձան նաեւ հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների օրակարգային, ինչպես նաեւ ինտեգրացիոն միավորումներում հետագա փոխգործակցությանը վերաբերող հարցերի:

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՄԻՋԵՎ

Պաշտոնական այցով Վատիկանում գտնվող Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց Սուրբ Աթոռի մշակույթի քահանայապետական խորհուրդ, հանդիպում ունեցավ քահանայապետական խորհրդի նախագահ, կարդինալ Ջանֆրանկո Ռավազիի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Հայաստանի եւ Սուրբ Աթոռի միջեւ փոխգործակցությանը եւ միջեկեղեցական հարաբերությունների զարգացմանը վերաբերող հարցեր:

Զրուցակիցները գոհունակությամբ արձանագրեցին միջեկեղեցական հարաբերությունների հարուստ օրակարգը եւ կարեւորեցին դրանց շարունակականության ապահովումը, ինչպես նաեւ երկու երկրների պատմամշակութային ու քաղաքակրթական ընդհանրություններն արտացոլող համատեղ ձեռնարկների իրականացումը:

Անդրադառնալով Հայաստանի եւ Սուրբ Աթոռի միջեւ միջպետական հարաբերությունների զարգացմանը՝ Հայաստանի նախագահն ու կարդինալ Ջանֆրանկո Ռավազին նշեցին, որ այցի շրջանակում ստորագրվող՝ մշակույթի ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը հնարավորություն կտա համատեղ հետազոտություններ իրականացնել պատմական եւ մշակութային կարեւոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ:

Հանդիպմանը հաջորդեց Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ու Սուրբ Աթոռի մշակույթի քահանայապետական խորհրդի միջեւ մշակույթի ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրումը:

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հոկտեմբերի 13-ին, Մոսկվայի Դանիլովի վանքում տեղի է ունեցել Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա պատրիարքի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեի եռակողմ հանդիպումը:

- Մենք հավաքվել ենք այստեղ՝ քննարկելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդիրը: Հուսով եմ, որ դուք եւ ես կգտնենք այն ճիշտ բառերը, որոնք առավել անհրաժեշտ են մեր ժողովուրդներին: Ես հավատում եմ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդների հեղինակությունը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ մարդկանց մտքերի վրա: Եվ ես հավատում եմ, որ այսօրվա հանդիպման փաստը եւ ձեր միջեւ երկխոսությունն օրինակ կդառնան բոլորի համար,- ասաց Համայն Ռուսիո պատրիարքը:

Նախօրեին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ զրույցի ժամանակ Համայն Ռուսիո պատրիարքը նաեւ ասել է, որ Հայաստանը կկարողանա հաղթահարել դժվար ժամանակները Ռուսաստանի եւ ռուս ուղղափառ եկեղեցու աջակցությամբ: Պատրիարք Կիրիլը Գարեգին Երկրորդ կաթողիկոսին պարգեւատրել է ռուս ուղղափառ եկեղեցու «Փառք եւ պատիվ» առաջին աստիճանի շքանշանով՝ Հայ Առաքելական եկեղեցու եւ Մոսկվայի պատրիարքարանի միջեւ բարեկամական հարաբերությունների զարգացման գործում ներդրած ավանդի համար, ինչպես կաթողիկոսի 70-ամյակի կապակցությամբ:

ՓԱՐԻԶԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԿԿՈՉՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Փարիզի քաղաքային խորհուրդը հոկտեմբերի 14-ին միաձայն որոշմամբ ընդունել է որոշում, Փարիզի կենտրոնական հատվածներից մեկը՝ Ալմայի եւ Էնվալիդների կամուրջների միջեւ ընկած եւ Սենա գետին հարող ընդարձակ տարածքը, անվանակոչել Հայաստանի անունով՝ ստանալով Հայաստանի էսպլանադ անվանումը («Esplanade d'Armenie»):

Հայաստանի էսպլանադը կընդգրկվի Փարիզի հասցեների պաշտոնական ռեգիստրում եւ իր ընդարձակ տարածքի մեջ կներառի նաեւ դեռեւս 2004 թվականին բացված Կոմիտասի հուշարձանը եւ 2009 թվականին բացված Երեւանի այգին:

Փարիզի խորհրդի այս խորհրդանշական նիստին հրավիրված էր ներկա գտնվելու նաեւ Ֆրանսիայում Հայաստանի դեսպանը:

«ՍՊՈՒՏՆԻԿ Վ» 50, 000 ԴԵՂԱՉԱՓ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Հայաստանի պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանի եւ ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի միջեւ ֆեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ՌԴ պաշտպանության նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարությանն է փոխանցել 50.000 դեղաչափ «Սպուտնիկ-Վ» պատվաստանյութ:

Ինչպես տեղեկացրին ՀՀ պաշտպանության նախարարությունից, հոկտեմբերի 14-ին պատվաստանյութի խմբաքանակը ռազմատրանսպորտային ինքնաթիռով տեղափոխվել է Երեւան:

ՆԵՐԳՐԱՎՈՒՄ Է ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԳԻՐ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Տանը կամ բակում շուն եւ կատու պահող Երեւանի բոլոր բնակիչները նոյեմբերի 1-ից պետք է պարտադիր հաշվառեն իրենց կենդանիներին: Այս մասին Երեւանի քաղաքապետարանը տարածել է հաղորդագրություն, որտեղ, մասնավորապես, ասված է, որ Երեւանի ավագանին, ընտանի կենդանիների պահման կանոններում վերջերս կատարած փոփոխություններով, հստակեցրել է, թե որտեղ եւ ինչպես է արվելու հաշվառումը:

Տնային կենդանիներ պահելու թույլտվություն ստանալու եւ հաշվառելու համար պետք է ներկայացնել կենդանու անասնաբուժական անչնագիրը, որտեղ նշված կլինի պահանջվող պատվաստումների եւ նույնականացման մասին տեղեկություններ: Նույնականացումն արվում է անասնաբուժական կլինիկաներում՝ դաջվածքի կամ միկրոչիպի միջոցով: Սա աշխարհում վաղուց արդեն ընդունված գործընթաց է, որի շնորհիվ մարդիկ կարողանում են անգամ շրջագայել իրենց կենդանիների հետ:

Այն քաղաքացիները, որոնք չեն հաշվառի իրենց կենդանիներին, ստիպված կլինեն կանոնների խախտման համար վճարել տուգանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԿՆՇՎԻ ԿՈՆԿՐԵՏ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ ԿՏՐՎԻ ՈՉ ԹԵ 18, ԱՅԼ ՄԻՆՉԵՎ 19 ՏԱՐԻՆ ԼՐԱՆԱԼԸ

Հայաստանի անձնագրերում առաջարկվում է հնարավորություն տալ նշել կոնկրետ ծննդավայրը: Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» եւ «Նույնականացման քարտերի մասին» օրենքներում փոփոխությունների նախագծին:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է. «Ներկայումս ՀՀ քաղաքացու անձնագրի (նույնականացման քարտի) մեջ ծննդյան վայրը դաշտում նշվում է այն պետությունը, որի տարածքում քաղաքացին ծնվել է: Այս մոտեցումն առաջացնում է խնդիրներ այն դեպքերում, երբ քաղաքացու ծննդյան վայրը Հայաստանի Հանրապետության կողմից չճանաչված պետություն է կամ միջազգայնորեն վիճարկելի տարածք:

Այդ փոփոխություններից մեկով ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ քննարկումների արդյունքում որոշվել է ներկայացված նախագծով արական սեռի քաղաքացիներին անձնագրերը սահմանված ընդհանուր կարգի համաձայն տրամադրել ոչ թե մինչեւ 18, այլ մինչեւ 19 տարին լրանալը:

Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ հաճախ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձը օտարերկրյա պետություններում անցկացվող սպորտային, մշակութային, զինվորական կամ այլ միջոցառումների մասնակցելու համար հնարավորություն չի ունենում դուրս գալ ՀՀ տարածքից, քանի որ անձնագիրը տրամադրվում է մինչեւ 18 տարին լրանալը:

Կառավարության կողմից հավանության արժանացած «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» եւ «Նույնականացման քարտերի մասին» օրենքներում փոփոխությունների նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրների լուծման եւ միեւնույն ոլորտը կարգավորող իրավական ակտերի միջեւ առկա անհամապատասխանությունները վերացնելու անհրաժեշտությամբ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ *18.10.2021*

Ղուկիանոս Հարյուրապետի, որ հավատաց Քրիստոսի խաչելությանը եւ Հովսեփ Աստվածահորը, Հովսեփ Արիմաթացու եւ Քրիստոսի բարեկամ Ղազարոսի ու նրա երկու քույրերի՝ Մարթայի եւ Մարիամի հիշատակության օր

23.10.2021 Տասներկու Սուրբ Վարդապետների՝ Ռեթեոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կյուրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Խուրի Ասորու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Աստվածաբանի, Եպիփան Կիպրացու, Հովհան Ոսկեբերանի եւ Կյուրեղ Ալեքսանդրացու հիշատակության օր

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՎԱՅՐԵՐ

Բարի ավանդույթ է դարձել Նինոծմինդայի Սբ. Սարգիս եկեղեցու կազմակերպած ուխտագնացությունները դեպի մեր երկրի եւ Հայաստանի սրբազան եւ տեսարժան վայրեր:

Հոկտեմբերի 9-ին եկեղեցու հավատացյալների մի ստվար խումբ, Արմաշ քահանա Պողոսյանի առաջնորդությամբ, եղավ Թբիլիսիում:

Նախ, ուխտագնացները եղան Հովհ.Թումանյանի տուն-թանգարանում, եղան Սոլոլակի նվիրական վայրերում, ոտքով հասան Սբ. Գեւորգ առաջնորդանիստ, ապա եւ Հավլաբարի Սբ. Էջմիածին եկեղեցիներում: Նրանց ընդունեցին թեմական առաջնորդի փոխանորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը, Տաթեւ քահանա Մարությանը, այլք:

Ուխտագնացներն իրենց ուղին շարունակեցին դեպի Խոջիվանքի պանթեոն, ուր հանգչում են հայազգի անվանի դեմքեր՝ Հովհ.Թումանյան, Ռաֆֆի, Գ.Սունդուկյան, Ջիվանի, Նարդոս, ուրիշներ:

Ուշ երեկոյան, անմար տպավորություններով խումբը վերադարձավ Նինոծմինդա:

«ԹԲԻԼԻՍՈԲԱ»

ՏՈՆԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԵՐԳԻ ԳՈՒՄԱՐԸ ԿՓՈԽԱՆՑՎԻ ԲԱԹՈՒՄԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՏՈՒԺՅԱԼՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հերթական փոփոխությունները կատարվեցին մայրաքաղաքի ավանդական «Թբիլիսոբա» տոնի ծրագրում: Այս տարի քաղաքի օրը համեստ է անցկացվելու. ավանդական միջոցառումներից կկայանա «Պատվավոր թբիլիսցիների» կոչում շնորհելու արարողությունը եւ կանցկացվեն «Աշնանային բարիքներ» գյուղատնտեսական տոնավաճառները:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, պլանավորված տոնական առցանց համերգը չեղարկվում է: Դրա անցկացման համար հատկացված փողերը կտրամադրվեն Բաթումիում բնակելի տան փլվելու հետեւանքով տուժածների օգնության հիմնադրամին:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 8-ին Բաթումիում հինգհարկանի տան ամբողջ մուտքի փլվելու հետեւանքով զոհվել է ինը մարդ, այդ թվում՝ երեք երեխա, 12 ընտանիք մնացել է առանց տանիքի:

- Տեղի է ունեցել ողբերգություն: Մեզ համար սկզբունքորեն կարեւոր է այդ ընտանիքներին օգնելը: Թբիլիսին միշտ կանգնած է այն մարդկանց կողքին, ովքեր հայտնվել են դժվարին կացության մեջ, ուստի ընդունվել է նման որոշում:

Չնայած նրա, որ համերգը չեղարկվել է, մենք չենք խախտում Թբիլիսիի ավանդույթը, եւ այս տարի կպարգեւատրենք «Պատվավոր թբիլիսցիներին,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ՖՈՒՏԲՈԼ

ԱՆՀԱՋՈՂ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Աշխարհի առաջնության որակավորման փուլի եվրոպական «B» եւ «J» խմբերում հանդես եկող Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները կրկին հուսախաբ արեցին իրենց երկրպագուներին:

Եվրոպական «B» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը կրեց հերթական պարտությունը: Այս անգամ սեփական հարկի տակ վրաց ֆուտբոլիստները 0:2 հաշվով զիջեցին Հունաստանի ազգային հավաքականին, թեպետ, երեք օր անց, մրցակցի դաշտում 2:1 հաշով առավելության հասավ Կոսովոյի թիմի նկատմամբ:

ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Շվեդիա	6	5	0	1	12	3	15
Իսպանիա	6	4	1	1	13	5	13
Հունաստան	6	2	3	1	7	6	9
Վրաստան	**7**	**1**	**1**	**5**	**4**	**12**	**4**
Կոսովո	7	1	1	5	4	14	4

Վրաստանին հավաքականը, 7 հանդիպումից հետո, իր ակտիվում գրանցած 4 միավորով կորցրեց աշխարհի առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու թե' գործնական եւ թե' տեսական հնարավորությունը:

Վրաստանի հավաքականը խմբի եզրափակիչ հանդիպումը կանցկացնի նոյեմբերի 11-ին, սեփական հարկի տակ եւ կընդունի Շվեդիայի հավաքականին:

Ինչ վերաբերում է եվրոպական «J» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականին, ապա՝ Իսլանդիայում ոչ-ոքի խաղաց, իսկ երեք օր անց կրկին մրցակցի դաշտում նվազագույն հաշվով՝ 0:1 զիջեց Ռումինիայի հավաքականին եւ հանգրվանեց խմբի մրցաշարային աղյուսակի չորրորդ հորիզոնականում:

Վերջին չորս խաղերում կորցրած միավորները լուրջ հարցականի տակ դրեցին առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու հնարավորությունը: Ճիշտ է, Հայաստանի հավաքականը տեսականորեն դեռ պահպանում է եզրափակչի ուղեգիրը նվաճելու հնարավորությունը: Դրա համար հայ ֆուտբոլիստները նոյեմբերի 11-ին եւ 14-ին սեփական հարկի տակ պետք է առավելագույն միավորներ կորզեն Հյուսիսային Մակեդոնիայի եւ Գերմանիայի հետ հանդիպումներում:

ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Գերմանիա	**8**	**7**	**0**	**1**	**23**	**3**	**21**
Ռումինիա	8	4	1	3	11	8	13
Հյուսիսային Մակեդոնիա	8	3	3	2	15	10	12
Հայաստան	8	3	3	2	8	11	12
Իսլանդիա	8	2	2	4	11	15	8
Լիխտենշտեյն	8	0	1	7	2	23	1

ՑԱՎԱԵԼԻ ԼՈՒՐ

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՎԱԽԹԱՆԳ (ԲՈՒԲԱ) ԿԻԿԱԲԻՁԵԻ ԿԻՆԸ՝ ԻՐԻՆԱ ՔԵԲԱՁԵՆ



Վախճանվել է հանրահայտ երգիչ եւ կինոդերասան Վախթանգ (Բուբա) Կիկաբիձեի կինը՝ Իրինա Քեբաձեն:

Զույգն ամուսնացել էր 1965 թվականին: Իրինա Քեբաձեն Թբիլիսիի Զաքարիա Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի բալետի մենապարուհի էր:

Զույգն ունի մեկ որդի՝ Կոկա Կիկաբիձեին:

«Վրաստան թերթը իր խորին ցավակցությունն է հայտնում հանրահայտ երգիչ ու կինոդերասան, բոլորի կողմից սիրված, մեր թերթի մեծ բարեկամ Վախթանգ Կիկաբիձեին՝ սիրելի կնոջ Իրինա Քեբաձեի մահվան կապակցությամբ:

«Վրաստան» թերթի խմբագրությունը իր վշտակցությունն է բերում «Վրաստան» թերթի նախկին աշխատակից Արթուր Ակոպովին, եղբոր՝

Աղասի Ռոբերտի ԱԿՈՊՈՎԻ

անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի ընտանիքի անդամներին, հարազատներին ու մերձավորներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Հայ լեզվագետ, բացատրական բառարանի հեղինակ: 11.Մետաղամշակման հաստոցի տեսակ: 12.Կրկեսի ժամանակավոր շենք: 13.Լուսային հոսքի միավորը ՍԻ համակարգում: 14.Գերմանացի ֆիզիկոս, քվանտային տեսության հեղինակը: 15.Արհեստավորի կահավորված սեղան: 19.Ուրարտական թագավոր: 23.Մարմնամարզիկ: 25. Շան վնգստոց, կլանչոց: 27.Ջմեռային հագուստ: 28.Լիրիկական քնարերգության հովանավոր մուսան հունական դիցարանում: 29.Գաճաճ: 31.Ֆլորերի պատմավեպը: 37.Ժողովը իրավազոր ճանաչելու համար անհրաժեշտ ձայների քանակը: 38.Գերմանացի կոմպոզիտոր: 40.Ապացուցում չպահանջող դրույթ: 41.Պայթուցիկ նյութ: 42.Վրացական ամենահայտնի մարզական ակումբը: 43.Ամսանուն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Դելֆինների ընտանիքի ծովային կաթնասուն: 2.Հանելուկի տեսակ: 3.Գերմանացի իդեալիստ փիլիսոփա: 5.Կենդանական եւ բուսական հյուսվածքների բաղադրիչ: 6.Իտալացի գրող, «Չիպոլինոյի արկածները» հեքիաթի հեղինակը: 7.Թրջված եւ ծլած ցորեն, գարի: 8.Վրացական ֆուտբոլի վետերան, սպորտի վաստակավոր վարպետ ... Շենգելիա: 9.Ավստրալիական վայրի շուն: 10.Գյուղատնտեսական աշխատանքի տեսակ: 16.Տարբեր բույսերի խաչասերում: 17.Ռուս հոկեյիստ, Օլիմպիական չեմպիոն: 18.Կրոնական պաշտամունքի առարկա դարձած կենդանի կամ բույս: 20.Վրաստանի պատմական երկրամասի բնակիչ: 21.Մետաքս արտադրող թրթուր: 22.Հաշվապահական հաշվեկշռի մի մաս: 24.Մանրահատիկ նստվածքային ապար: 26.Կերպարվեստի ժանր: 28.Եռատերեւ դաշտային ծաղկաբույս: 30.Երաժշտական գործիք: 32.Ալ.Դյումայի եռերգության հերոսներից: 33.Վրաստան բնական գազ եւ այլ վառելիք մատակարարող Ադրբեջանական ընկերություն: 34.1981 թվականի Թբիլիսիի «Դինամոյի» կիսապաշտպան: 35.Քիմիական որեւէ տարրի միացությունը թթվածնի հետ: 36.Հայ մեծ բանաստեղծ: 38.Երկրաչափական մարմին: 39.Թումանյանի պոեմի հերոսներից:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Կալաձե: 5.Փարվանա: 10.Ուղտ: 11.Ոսոխ: 14.Հմուտ: 15.Տատոեւա: 17.Ավան: 20.Որ: 21.Նես: 22.Տալախաձե: 24.Տապ: 26.Ինձ: 28.Գանձ: 30.Եղինջ: 33.Ալիսա: 35.Սար: 36.Գալկին: 39.Աջ: 40.Վաղ: 41.Անիվ: 43.Ինչու: 44.Արի: 45.Լավա: 46.Կոբ: 47.Առատ: 49.Ար: 50.Դեմ: 52.Սեդա: 54.Գիր: 56.Խաղող: 57.Սարվոր: 58.Մայն: 59.Հաց: 61.Սահանք: 62.Ալանի: 63.Թյուր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ակտուալ: 3.Ազոտ: 4.Ենոտ: 6.Առավոտ: 7.Արման: 8.Արտիստ: 9.Մուլատ: 12.Սաբա: 13.Խորեն: 16.Արագիլ: 18.Վաղես: 19.Նանիր: 23.Ձի: 25.Պասկալ: 27.Ձագար: 29.Նաինա: 31.Ղարիբ: 32.Ձաջուռ: 34.Լաղիձե: 37.Նիվա: 38.Անկարա: 39.Աչագեղ: 40.Վատ: 42.Վարար: 48.Աքաղաղ: 50.Դիսնեյ: 51.Մարգար: 52.Սա: 53.Դոմնա: 54.Գոհար: 55.Իրան: 56.Խրամ: 60.Ցին:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՈ ՄՈՆԱՅԱՐՄՈ: ՄԾՈԼՈՆՈ 0105, Ց.ԱՅՈՎՆԵՂԼՈՆ ՀՈՒՐԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ» ՄԾՈԼՈՆՈ, ՍԱՀԱՐՄՈՅԼՈ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445